ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2016 թվականի թիվ 37(Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 81(Ն) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, 1 ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքի (հողամասերի, շենքերի և շինությունների) օտարման 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 81(Ն) որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 23) և 24) կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -1

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԱՎԱԳՅԱՆ Լ.
3. ԲԱԲԱՅԱՆ Հ.
4. ԻՎԱՆՅԱՆ Վ.

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար՝ **Ա.Հակոբջանյան**

2016թ. հունիսի 09
ք.Սիսիան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
համայնքի ավագանու 2016թ.հունիսի 9-ի
թիվ 37(Ն) որոշման

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 81(Ն) որոշման հավելվածում կատարվող լրացումները

հ/հ	Օտարվող գույքի վկայականի համարը և ծածկագիրը	Օտարվող գույքի հասցեն	Օտարվող գույքի մակերեսը, քմ	Օտարման նպատակը	Օտարման ժամկետները	Գույքի օտարման մեկնարկային գինը ՀՀ դրամով՝ ըստ գոտիների	Հողամասի գործառնական նշանակությունը և կատեգորիան
23	վկ. 30032016-09-0020 հող.ծածկ.09-006-0237-0070 շին. 09-006-0237-0070-001	Հ.Ազոյան 1/43-3	30 25.6	ավտոտնակ	II կիսամյակ	15840 22016/գույքի օտարման գինը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 2006թ. Թիվ 912-Ն որոշմամբ հաստատված	բնակավայրերի բնակելի կառուցապատման
24	վկ.23052016-09-0016 հող.ծածկ.09-006-0086-0025 շին.ծածկ.09-006-0086-0025-001	Սիսական 41	573.21	գրասենյակ կազմակերպելու	II կիսամյակ	համաձայն գույքի շուկայական գնահատման հաշվետվության	բնակավայրերի հասարակական կառուցապատման

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ.ՄԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2016 թվականի թիվ 38(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 28.1) կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնապահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման սխեմաները՝ համաձայն 1-5 հավելվածների:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԱՎԱԳՅԱՆ Լ.
3. ԲԱԲԱՅԱՆ Հ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
5. ԻՎԱՆՅԱՆ Վ.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
8. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար **Ա.Հակոբջանյան**

2016թ. հունիսի 09
ք.Սիսիան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
համայնքի ավագանու
2016թ հունիսի 9-ի թիվ 38(Ա) որոշման



Հատկացվող տարածք՝ 82քմ

Սիսիանի համայնքի ղեկավար Ա.Հակոբջանյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
համայնքի ավագանու
2016թ հունիսի 9–ի թիվ 38(Ա) որոշման



Հատկացվող տարածք՝ 5 հատ 20-ական քմ

համայնքի ղեկավար Ա.Հակոբջանյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
համայնքի ավագանու
2016թ հունիսի 9–ի թիվ 38(Ա) որոշման



Հատկացվող տարածք 225քմ

համայնքի ղեկավար Ա.Հակոբջանյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
համայնքի ավագանու
2016թ հունիսի 9–ի թիվ 38(Ա) որոշման

Հատկացվող տարածք՝ 87քմ

համայնքի ղեկավար Ա.Հակոբջանյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
քաղաքային համայնքի ավագանու
2016թ հունիսի 9 –ի թիվ 38 (Ա) որոշման



Հատկացվող տարածք՝ 91քմ

համայնքի ղեկավար՝ Ա.Հակոբջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2016 թվականի թիվ 39(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 20) կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 3)-րդ մասով ու 67-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 81(Ն) որոշումը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, 1 ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. 2016 թվականին բաց դասական աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հետևյալ հողամասերը.
   1) Սիսական 76/2 հասցեի 1000քմ հողամասը (վկ.16032016-09-0017, ծածկ. 09-006-0106-0049, կադաստրային արժեքը 1քմ հողամասի՝ 528 դրամ) 528000 (հինգ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով,
   2) Սիսական 76/4 հասցեի 1000քմ հողամասը (վկ.16032016-09-0016, ծածկ. 09-006-0106-0050, կադաստրային արժեքը 1քմ հողամասի՝ 528 դրամ) 528000 (հինգ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -1

1. ԱՂԱՅԱՆ Գ.

1. ԲԱԲԱՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Լ.

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.

4. ԻՎԱՆՅԱՆ Վ.

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար **Ա.Հակոբջանյան**

2016թ. հունիսի 09
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2016 թվականի թիվ 40(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20) կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4) կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 81(Ն) որոշումը, հաշվի առնելով Սիսիանի քաղաքապետարանի և Սուրեն Վարդանյանի միջև կնքված հողամասի վարձակալության պայմանագրի 2.1.5 կետը, նկատի ունենալով Ս. Վարդանյանի 2015 թվականի սեպտեմբերի 7-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան-Շաքե խճուղի 11 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման 3693քմ (ծածկ.09-006-0201-0010) հողամասը 2016 թվականին ուղղակի վաճառքի միջոցով՝ 1քմ 342 ՀՀ դրամ կադաստրային արժեքով օտարել այն փաստացի տիրապետող, հողամասի վարձակալության պայմանագրով գնման նախապատվություն ունեցող անձ, քաղաքացի Սուրեն Վարդանյանին՝ զբոսաշրջային տուն կառուցելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԱՎԱԳՅԱՆ Լ.
3. ԲԱԲԱՅԱՆ Հ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

7. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

8. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար՝ **Ա.Հակոբջանյան**

2016թ. հունիսի 09
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2016 թվականի թիվ 41(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 20) կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման կարգի 46.2 կետի ա) ենթակետը և 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումը, նկատի ունենալով Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 11-ի թիվ 35(Ա) և 2016 թվականի մարտի 14-ի թիվ 11(Ա) որոշումներն ու համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնապահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. 2016 թվականին առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ հողամասերը.
   1) Որոտան 4/2-9 հասցեի 20քմ հողամասը (ծածկագիր՝ 09-006-0249-0143) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
   2) Որոտան 4/2-8 հասցեի 20քմ հողամասը (ծածկագիր՝ 09-006-0294-0142) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
   3) Գայի փողոցի 3/1-7 հասցեի 20քմ հողամասը (ծածկագիր՝ 09-006-0094-0228) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
   4) Գայի փողոցի 3/1-8 հասցեի 20քմ հողամասը (ծածկագիր՝ 09-006-0094-0227) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,

5) Գայի փողոցի 10/3-4 հասցեի 20քմ հողամասը (ծածկագիր՝ 09-006-0094-0229) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
6) Խանջյան 52/1-1 հասցեի 20քմ հողամասը (ծածկագիր՝ 09-006-0239-0227) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
7) Չարենցի փողոցի 4/1-6 հասցեի 18քմ հողամասը (ծածկագիր՝09-006-0249-0144) շարժական առևտրի կրպակ տեղադրելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԱՎԱԳՅԱՆ Լ.
3. ԲԱԲԱՅԱՆ Հ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
5. ԻՎԱՆՅԱՆ Վ.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
8. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար **Ա.Հակոբջանյան**

2016թ. հունիսի 09
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2016 թվականի թիվ 42(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՁԵՂՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 19) կետով և նկատի ունենալով «Աղվան Մինասյանի անվան ՄՊՍԿ» ՀՈԱԿ-ի, «Զ.Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի, «Էմմա Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենների գրություններն ու համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ձեղչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի «Աղվան Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի երեխաների՝ Արմինե Մկրտչյանին, Հայկ Պողոսովին, Կարեն Մարտիրոսյանին, Աիդա Սարգսյանին և Մարիամ Ամիրյանին 2015-2016 թվականների ուսումնական տարվա համար մատուցված ծառայության դիմաց հաշվարկված 67000 /վաթսունյոթ հազար/ դրամ վարձավճարները:
2. Ձեղչել «Զ.Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի սան Վարդուհի Մնացականյանի 2015-2016 թվականների ուսումնական տարվա համար մատուցված ծառայության դիմաց հաշվարկված 34000 /երեսունչորս հազար/ դրամ վարձավճարը:
3. Ձեղչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Էմմա Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի սաներ՝ Նանե Դանիելյանին և Տիգրան Մինասյանին 2015-2016 թվականների ուսումնական տարվա համար մատուցված ծառայության դիմաց հաշվարկված 21500 /քսանմեկ հազար հինգ հարյուր/ դրամ վարձավճարները:
4. Սիսիանի համայնքի բյուջեի միջոցների հաշվին՝ կազմակերպություններին տրամադրել փոխհատուցում զեղչված գումարի չափով:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2016 թվականի թիվ 43(Ա)

«ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՆՈՒՀ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 15) կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ «Սիսիանի համայնքի թիվ 4 ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածու Քրիստինա Վարդանի Հարությունյանի նշանակմանը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԱՎԱԳՅԱՆ Լ.
3. ԲԱԲԱՅԱՆ Հ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
5. ԻՎԱՆՅԱՆ Վ.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
8. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար **Ա.Հակոբջանյան**

2016թ. հունիսի 09
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2016 թվականի թիվ 44(Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 07(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքում 2016 թվականի գարնանը և աշնանը ծառերի հատում ու էտ իրականացնելու մասին» թիվ 07(Ա) որոշման մեջ կատարել լրացում և որոշման հավելվածը լրացնել 10) կետով՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԱՎԱԳՅԱՆ Լ.
3. ԲԱԲԱՅԱՆ Հ.
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
5. ԻՎԱՆՅԱՆ Վ.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
8. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

Համայնքի ղեկավար՝ **Ա.Հակոբջանյան**

2016թ. հունիսի 09
ք.Սիսիան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի
ավագանու 2016թ. հունիսի 9-ի
թիվ 44(Ա) որոշման

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 25-ի թիվ 07(Ա) որոշման հավելվածում կատարվող լրացումը

N	Փողոցների անվանումը	Հատվող ծառերի քանակը (հատ)	Էտվող ծառերի քանակը
10	Գ.Նժդեհ փողոցին կից, Կ.Դեմիրճյանի անվան զբոսայգի	7	8
	Ընդամենը	**7**	**8**

Աշխատակազմի քարտուղար **Վ. Միրաբյան**